

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԶՐԱՆՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
V—XII դդ. ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՎՌԱՄՇԱԳՈՒՆ ԶԻՀԱՆՅԱՆ

1. Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի խոշոր գետերի գլխավոր շրարածանն է։ Այստեղից են սկիզբ առնում և լեռնաշխարհի ձորերով ու հովիտներով դեպի հարևան հարթավայրեր հոսում ոչ միայն Եփրատ, Տիգրիս, Արաքս, Կուր, Ճորոխ, Գայլ գետերը, այլև դրանց վտակներն շատերը։ Լեռնաշխարհի գագաթնափայտներում ու սարահարթերում կան բազմաթիվ լճեր ու լճակներ։ Սակայն տարածքի հին շրանունները (գետերի ու լճերի հին անունները) բավարար արտացոլում չեն գտել հայ մատենագրության մեջ¹։ Լեռնաշխարհի հին տեղանունների, այդ թվում՝ լեռնանունների, հիմնական աղբյուրները V—XII դդ. հայ մատենագրության պատմական և աշխարհագրական բնութի երկերն են։

Պատմական երկերում աշխարհագրական վայրերի անունները հիշատակվում են պատմական որևէ իրադարձության հետ առնչվելու դեպքում միայն։ Սակայն հաճախ պատմիչները տեղանունը չեն նշում՝ բավարարվելով սոսկ օրյեկտի տեսակային անունը տալով²։ Ուստի զարմանալի չէ, որ պատմական առանձին երկերում շրանունների քանակը մեծ չէ³։

Աշխարհագրական երկերը, յնայած պարունակած առավել հարուստ նյութին, քիչ բան են ավելացնում պատմական Հայաստանի՝ այլ աղբյուրներից հայտնի շրանուններին։ Ի դեպ, այս երկերում լեռնաշխարհի տարբեր տարածքներ անհամաչափ են նկարագրված։ Օրինակ, «Աշխարհացույցում» Մեծ Հայքի Տուրքերան, Այրարատ, Բարձր Հայք աշխարհները նկարագրված են ըստ վայրի մանրամասնորեն (գավառների գիրքը, լեռները, գետերը), այնինչ Սյունիք, Արցախ, Գուգարք, Վասպուրական աշխարհների նկարագրությունը սահմանափակված է սոսկ գավառների թվարկմամբ։

Ճ. V—XII դդ. հայ մատենագրության մեջ հանվան ավանդված են հետևյալ շրանունները.

ա) գետաճագեր. Երասխ, Մուրց (Մուրցամօր), Ախուրեան (Ահուր), Մեծ գետ (Մեծագետ), Մեծ մօր, Մեծամօր, Քասախ (Քասաղ), Հրազդան (Հուրաստան), Ասպահեն կամ Խոզմօր, Ազատ, Գինայ, Տղմուտ, Աղաւնոյ, Ռահ, Կուր, Տրտու, Լոփնաս (Լուքնաս), Աղուան, Գետառու, Եփրատ, Արածանի, Բազրեանդ, Մեղ (Մեղեայ գետ), Մեղեայ գետ, Մանանաղի, Մամուշեղ, Դիղաթ (Տիգրիս), Քաղիթ կամ Շիթիթմա, Ջերմ (Ջերմայ), Որբ, Կորգուաց գետ, Ճորոխ կամ Ակամսիս կամ Յահ, Գայլ, Մեա Գայլ, Ալիւ, Առուն, Արասխ և այլն.

1 Հայկական լեռնաշխարհում 50 կմ և ավելի երկարությամբ 100-ից ավելի գետեր կան։ Ոչ մեծ (1:2000000 մասշտաբի) քարտեզի վրա հս. լ. 37°—41°-ով և արլ. եր. 38°—44°-ով սահմանափակված տարածքում ամրագրված են 60-ից ավելի գետերի և շուրջ 15 լճերի անուններ։ Հայ մատենագրության տվյալները զգալիորեն զիջում են այս տվյալներին։

2 Մենք չգիտենք, օրինակ, թե հետևյալ քաղվածքներում հիշատակված գետերն ինչպես էին կոչվում հնում. «Հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել» (Խոր. 52), «զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ» (Խոր. 53) (խոսքն այժմյան Խոշար գետի մասին է), «էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու... ի գետախառնունսն երկուց գետոց» (Բուզ. 115) (երկրորդ գետի անունը մնում է անծանոթ), «յորժամ ի գեօզն մըտանէր սուրբ և աստուածասէր ժողովն, գետ փոքրագոյն անցանէր ընդ մէջ շինին» (Կաղ. 74), «ի գալն մեր ի հովիտ մի Արցախայ՝ յեզր գետոյն ի տեղի մի Չղախ անուն կոչեցեալ» (Կաղ. 209)։ Նման հաղորդումներ շատ կան մեր պատմիչների երկերում։

3 Այսպես, օրինակ՝ Կորյունը հիշատակում է 1 գետանուն, Ագաթանգեղոսը՝ 3, Եղիշեն՝ 3, Բուզանդը՝ 6, Փարպեցին՝ 2, Խորենացին՝ 19, Ղևնդը՝ 6, Սերեոսը՝ 11, Մամիկոնյանը՝ 6, Գրասխանակերտցին՝ 11։

բ) լճաւաններ. Բղնունեաց ծով կամ Ռշտունեաց ծով կամ Աղի ծով, Գայլատու ծովակ, Գեղամայ կամ Գեղա(ր)քունեաց ծովակ, ծովակ Հիւսիսոյ, Պաղակացիս լիճ, Եղիգի լիճ, Կարնոյ ծով, Միայ ծով, Մովք լիճ:

Յ. Հայկական լեռնաշխարհի հին ջրանունների, հատկապես գետանունների ցանկը կարելի է լրացնել նաև հայ մատենագրության այլ կարգի վկայություններով: Օրինակ՝ «Աշխարհացոյցում» Սյունյաց աշխարհի նկարագրության մեջ կարդում ենք. Դ. Սիւնիք... ունի գաւառս երկու տաւան. դերնյակ, զճահուկ, զՎայոց ձոր, զԳեղաքունի՝ հոմանուն ծովովն, զՍոթա, զԱղահէճ, զՆդուկն, զՀարանդ, զԲաղս, ռՁորս, զԱրևիս, զԿովսական հոմանուն գետովք...»⁴ Ըստ «Աշխարհացոյցի» հոմանուն գավառներ և գետեր են եղել նաև Տայքում, Գուդարքում: Հայ մատենագրության մեջ տվյալներ կան, որ հոմանուն գավառներ և գետեր են եղել նաև այլ վայրերում, ինչպես՝ Զերմաձոր (գավառ Մոկաց աշխարհում) և Զերմ (Զերմայ) գետ⁵, Բագրեանդ (գավառ Այրարատում) և Բագրեանդ գետ⁶, Կորդուք (Կորձայք աշխարհի գավառ) և Կորդուաց գետ⁷, Մանանադի (գավառ Բարձր Հայքում) և Մանանադի գետ⁸: Մեծ Հայքի որոշ գավառների անուններու պրս. ասո՝ գետ Բառի առկայությունը ևս վկայում է, որ հատկապես լեռնային գավառները շատերը հոմանուն էին այդ գավառներով հոսող գետերին կամ գետերը հոմանուն էին իրենց հովիտներում դնվող գավառներին:

4. Հայկական սկզբնաղբյուրներում ջրանունները հանդիպում են հետևյալ շարահյուսական կառուցվածքներում. ա) բառակապակցություններում, որոնց անդամներից մեկը գետ, ծով, ձուլակ, լիճ, մօր բառերից մեկն է. տեղանունը կարող է նախորդել կամ հաջորդել դրանց. բ) որպես գետ, ծով, լիճ, ձուլակ, մօր բառերի լրացում հանդես եկող (որոշիչ կամ քաղաքանշան) երկրորդական նախադասության կամ դերբայական դարձվածի կազմում. գ) ակունք, եզր, գետագետ, ձուլեզր, ևս բառերով կապակցություններում իրեն հատկացուցիչ. դ) «տեղանուն» և՛ «տեղանուն» խառնին կամ «տեղանուն» խառնի ի «տեղանուն» կառուցվածքներում:

Յ. Զրանունների վկայությունների հիմնական եղանակը առաջինն է՝ տեղանուն + գետ և ևս + տեղանուն: Այս կապակցություններում դրսևորվում են որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված տեղանունի դիրքով:

Նախադաս դիրքում տեղանունը դրսևորում է նախադաս որոշիչ հատկություններ. այն հոլովով չի համաձայնում հասարակ անվանը, այլ մնում է անփոփոխ. ինչպես՝ «և ընդ Ալիս գետ անցեալ... սաստկեաց զգորս» (հոր. 124), «զայգին մեծ յոր մտանէր Առուն գետ» (հոր. 194), «հուպ ի քաղաքն Երուսաղայ ի վերայ Ախուրեան գետոյ» (հոր. 175), «պատահէին երանելոյն դափամբ Ռահ գետոյն» (Կոր. 54), «առ խորագոյն դարիւքն Լուինաս գետոյն» (Եղիշէ, 76), «կարգէր և կազմէր զճակատն... առ ափն Տղմուտ գետոյն» (Եղիշէ, 116), «անտառ առ Ազատ գետովն տնկէ» (հոր. 265), «որք անցեալ վտարին այսր զԿոր գետովն» (հոր. 200), «շէնս պարգեհալ նմա զՀրազդան գետովն» (հոր. 121): Այս կապակցություններում հասարակ անունը երբեմն հոգ է ընդունում, երբեմն՝ ոչ: Հոգառությունը որոշակի օրինաչափության չի ենթարկվում, այն զուտ ոճական երևույթ է կամ հեղինակի անհատական նախասիրության արտահայտություն: Ունենք մի վկայություն, որտեղ հոգ է ստացել ոչ միայն հասարակ անունը, այլև տեղանունը՝ «անցուցանէին... յայնկոյս Կուրն գետոյն» (Փարպ. 134):

Հետևյալ վկայություններում գետանունները գործածված են ածականական ձևով՝ «ալիքն ածաիցով»՝ «ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու» (Ագաթ. 426—427), «յալկունս Եփրատական գետոյն» (Ագաթ. 428), «անց յայս կոյս Կուրտկան գետոյն» (Կաղ. 99), «իջեալ բանակէին առ ափն Կուրական գետոյն» (Կաղ. 103), «մեծամեծ աւարօքն անցեալ զԿուրական գետովն» (Կաղ. 103), «յայնկոյս Տրտուական գետոյն ի հարաւական կողմանն... քանակէին» (Կաղ. 99), «առ ափն Տրտուական գետոյն» (Կաղ. 205):

Ըստադաս դիրքում ջրանունը հանդես է գալիս երկու ձևով՝ ուղիղ (անփոփոխ), երբ հասարակ անունը ուղղական կամ հայցական հոլովով է, և սեռական հոլովաձևով, երբ հասարակ անունը որևէ թեք հոլովով է: Այս դեպքում, հավանաբար, կարելի է խոսել մասնակի անհամա-

4 Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (այսուհետև՝ ԵՀԱ), Երևան, 1983, էջ 109:

5 ԵՀԱ, էջ 108 գետն անվանվում է Զերմ, ՍԵՊ, էջ 52՝ Զերմայ:

6 ԵՀԱ, էջ 110:

7 Բուդ., էջ 220:

8 Լաստ., էջ 158:

ձայնության մասին, քանի որ շրանունների արականն ու բացականը ձևով չեն տարբերվում սեռականից, և անհամաձայնությունը փաստորեն ի հայտ է գալիս միայն գործիական հոլովում՝ Օրինակ՝

Ուզդ. սաստկացեալ կցեալ էր գետն Եփրատ» (Բուզ. 191), «ուր գետն Եփրատ... անցանէ ընդ խոխոմս» (Խոր. 41):

Հայց. «ընդ գետն Գալլ յայնկոյս անցանէին» (Ագաթ. 400), «ի լեռնն Նպատ մերձ ի գետն Եփրատ» (Բուզ. 192):

Սեռ. «չինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրեանայ» (Խոր. 166), «դիմեալ անցանէր... ընդ կամուրջ գետոյն Երասխայ» (Փարս. 144), «Ողական... որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ» (Բուզ. 191):

Բայց. «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն...» (Խոր. 113):

Գործ. «բանակեսլ նոցա առ գետովն Երասխայ» (Կաղ. 142), «էանց Բարան զգետովն Երասխայ» (Կաղ. 327), «սլացեալք... առ մեծ գետովն Կուրայ» (Կաղ. 142):

Ջրանվան հտազաս կիրառության դեպքում հասարակ անունը միշտ հոգ է ընդունում, Բացառություն կազմող միակ օրինակն է՝ «բուր մի առ եզերք գետոյ Երասխայ շինէ քաղաք» (Դրասխ. 16):

Մեկ այլ բացառություն է հետևյալ օրինակը, սրտեղ սեռական հոլովով հասարակ անվանը հաջորդում է անփոփոխ ձևով շրանունը՝ «Եւմարն Երուանդայ էր... ի վերայ գետոյն Ախուրեան» (Խոր. 171): Տվյալ դեպքում, հավանաբար, շրանվան -եան հանգավորումը զուգորդվել է գրաբարում որոշ բառերի սեռականի -եան վերջավորության հետ, ուստի այն չի հոլովվել, չնայած դարձյալ Խորենացին մեկ այլ տեղում նույն տեղանունը գործածել է սեռական հոլովով՝ «գետոյն Ախուրեանայ»:

Ջրանունների նախադաս և հտազաս կիրառությունները ի հայտ են բերում նաև այլ առանձնահատկություններով Երանունը նախադաս է, ապա նախդիրը դրվում է շրանունից առաջ միայն. «ընդ Դվլաթ դետ» (Կաղ. 176), «ի Կուր գետ» (Կաղ. 325), «ի վերայ Ախուրեան գետոյ» (Խոր. 175), «յԱխուրեան գետոյ» (Ասող. 187), «առ Ազատ գետովն» (Խոր. 265), «զԿուր գետով» (Դրասխ. 161): Եթե շրանունը հտազաս է, ապա նախդիրը կարող է դրվել միաժամանակ թե հասարակ անունից և թե շրանունից առաջ՝ «ընդ գետն մեծ ընդ Կուր» (Բուզ. 15):

Ուշագրավ է որական անունի որոշիչ հավելման առանձնահատկությունը, որ նկատվում է շրանունների հտազաս կիրառությունների ժամանակ: Եղած բոլոր վկայությունները միայն մեծ անունով են, սակայն այն ազատորեն է գործածվում այս բառակապակցություններում՝ նախորդելով կամ հաջորդելով հասարակ անվանը՝ «մեծ գետն Կուր» (Բուզ. 211), «գետն մեծ Կուր» (Խոր. 177), «գետոյն մեծի Դվլաթայ» (Սեթ. 35): Նախադաս շրանուններով բառակապակցություններում որական անունի կիրառության դեպքեր չկան:

Ջրանվան նախադաս կամ հտազաս գործածությունը ևս որոշակի օրինաչափություններ չունի: Վ. դ. մատենագրական տվյալներով դժվար է նախապատվություն տալ այս կամ այն եղանակին՝ Ավելի ուշ՝ VII—XII դդ. արդեն որոշակի հակում է նկատվում դեպի հտազաս կիրառությունները:

Ստորև ներկայացնում ենք շրանունների նախադաս և հտազաս, հասարակ անվան հոլով և առանց հոլի գործածությունների վիճակագրական տվյալները (բացառել ենք հատկացուցիչ հատկացյալ տիպի կապակցությունները, որոնց մասին խոսք կլինի ստորև) ըստ առանձին հեղինակների երկերի:

6. Ջրանունների վկայությունների մյուս եղանակները ղգալիորեն սակավ են, սակայն այդ եղանակներով ևս վկայված են որոշ շրանուններ, որոնք այլուր հիշատակված չեն:

Որպես գետ, ծով, ծովակ, լիճ բառերի լրացում (որոշիչ կամ բացահայտիչ) հանդես եկող երկրորդական նախադասության կամ դերբայական դարձվածի կազմում շրանունները հանդիպում

9 Ա. Բագրատունին այս երևույթը համարում է բացահայտիչ և բացահայտյալի բաղադրություն (Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս դարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 489):

10 Փափստոս Բուզանդը գիտն միայն հտազաս գործածությունը: Թերևս այս եղանակը ժողովրդական խոսքին ավելի էր հարազատ, որի պատճառով հետագայում այն մեծ տարածում գտավ:

Ծրկերը	Դետանունը նախադաս է		Գետանունը ետադաս է	
	Հասարակ անունը		Հասարակ անունը	
	հոգով է	առանց հոգի է	հոգով է	առանց հոգի է
1. Կորյուն	1	—	—	—
2. Աղաթանգեղոս	5	—	3	—
3. Եղիշե	1	1	—	—
4. Բուդանգ	—	—	6	—
5. Փարպեցի	3 ¹¹	1	1	—
6. Խորենացի	1	10	9 ¹²	—
V դարում	11	12	19	—
7. Սերեռս	—	1	10	—
8. Ղևոնգ	—	—	9	—
9. Դադանկատվացի	6	7	18	—
10. Մամիկոնյան	—	—	1	—
11. Դրասխանակերտցի	—	8	3	1
12. Ասողիկ	1	7	10	—
VII—XII դարերում	7	23	51	1

են այն դեպքում, երբ առաջին անգամ են հիշատակվում տեքստում. «անուն տեղւոյն Մամբրէ ի վերայ գետոյն, որ անուանեալ կոչի Մամուշեզ» (Բուդ. 221), «անցին զգետովն, որ կոչի Զերմայ» (Սեթ. 52), «շէնո պարդէն նմա առ եղերր գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան» (Խոր. 42), «իշին բանկեցան առ ափն գետոյն, զոր Գայն կոչեն» (Աղաթ. 34), «մերձ ի ծովակն, որ կոչի Պաղակացի» (Ղևոն. 13): Սակայն երբեմն այն պարզապէս ոճական արժեք ունի, քանի որ մինչ այդ ջրանունն արդեն հիշատակված է եղել. «առ ափն գետոյն, որ Կուր կոչի» (Ասող. 171). ջրանունը մինչ այդ արդեն վկայված է (Ասող. 34, 51): Այս կառուցվածքներում ջրանունը միշտ դրվում է ուղղական կամ հայցական հոլովներով և, եթէ նախորդում է բայական անդամին, ապա կարող է նաև հոգ ընդունել:

Ուշադրով են փարպեցու հետևյալ հիշատակությունները. «անցանէին ընդ գետն մեծ՝ անուանեալն Կուր գետ» (66), «փութացան անցանել ընդ գետն մեծ՝ զոր Կուր գետն կոչեն» (65), «յայնկոյս գետոյն, զոր Կուր գետն անուանեն» (133): Առհասարակ այս տիպի կառուցվածքներում գետ բառը երկրորդական նախադասության կամ դերբայական դարձվածի մեջ ջրանվանը կապակցված չի կրկնվում:

7. Զրանուններ են նաև որպես Խկունք, ափ, եզր բառերի լրացում հանդես եկող տեղանունները. «ըմբռնեալ զեղբայր մեծին Յովնիսիայ յակունս Մեծամորի» (Դրասխ. 113), «զայր հասանէր... ի գետեզրն Ծրասխայ» (Փարպ. 121): Սակայն վկայված օրինակներում ջրանուններն ավելի հաճախ հանդես են դալիս բառակապակցությունների մեջ՝ «ընդ եզր գետոյն Ծրասխայ» (Ղևոն. 24):

8. Սակավաթիվ են «(տեղանուն) և (տեղանուն) խառնին» կամ «(տեղանուն) խառնի ի (տեղանուն)» տիպի վկայությունները: Սակայն այս եղանակով են որոշվում գետն Մեծ, մօրն Մեծ, Մուրց, Մանանաղի գետանունները. «ի տեղւոյ, ուր գետն Մեծ ի ծովակէն Հիւսիսայ սկիզբն առեալ իլանէ և խառնի ի մօրն Մեծ» (Խոր. 109), «մինչև յեզր Եփրատայ, ուր Մանանաղի ի նմա

11 1 դեպքում հոգ է ստացել նաև գետանունը:

12 1 դեպքում սեռական հոլովով հասարակ անվան հետ գործածված է ուղղական հոլովով գետանուն:

խառնի» (Լաստ. 158), «ծնաւ ի տեղւոյն, ուր խառնին Մուրց ե Երասխ» (Խոր. 199), «ի տեղին, ուր խառնին Երասխ ե Մեծամօր» (Խոր. 176)։

9. Կան նաեւ շրանունների այնպիսի հիշատակություններ, որոնց մեջ նշված եղանակներից ե ոչ մեկը չի արտահայտված. «անցուցին ընդ Արածանի ե հանին ի Փարէէ» (Մամիկ. 28), «ձեռնառու լինի նմա ե Երասխ փայտիւք մայրեաց» (Խոր. 177), «վաղեաց զԵփրատա...» (Խոր. 308), «անցեալ ընդ Տիգրիս...» (Ասող. 131)։ Սակայն այս վկայությունները վերարժեքում են գլխավորապես շատ հայտնի շրանուններին (Եփրատ, Երասխ, Արածանի, Տիգրիս)։

10. Առաջին տիպի կառուցվածքները (տեղանուն + գետ ե գետ + տեղանուն) հայագիտության մեջ գնահատվում են որպես որոշիչ + որոշյալ, հատկացուցիչ + հատկացյալ, բացահայտիչ + բացահայտյալ կապակցություններ։

11. Հատկացուցիչ — հատկացյալ կապակցությունները դյուրութեամբ են որոշվում, քանի որ տեղանունն այստեղ միշտ սեռական հոլովով է դրվում, ինչպես՝ գետն Կորզուաց, դետն Մեղ-տեալ, ծովն Ռշտունեաց, ծովն Բզնունեաց ե այլն։ Շարահյուսական տեսակետից սրանք իսկապես հատկացուցիչ — հատկացյալ կապակցություններ են, սակայն դժվար չէ համոզվել, որ գետն Կորզուաց, գետն Մեղտեալ ե նման կապակցությունները իմաստային առումով տարբերվում են ակունք Մեծամօրի, եզերք Արածանու, զափամր Ռաճ գետոյն կապակցություններից։ Վերջիններից ե նշում են հասարակ անվամբ արտահայտված գոյականի (առարկայի) անմիջական կապը (պատկանելությունը կամ վերաբերումը) տեղանվամբ արտահայտված գոյականին (առարկային), այնինչ առաջիններում այդ կապը հարաբերական է. տեղանունը միշտ է տեղորոշելու, բացատրելու ջրային օբյեկտի դիրքը։ Այս կապակցությունները ավելի անվանողական բնույթ ունեն, ուստի, մեր կարծիքով, դրանք պետք է դիտել որպես առանձին, ինքնուրույն տեղանուններ՝ շրանուններ։

12. Մյուս բոլոր դեպքերում տեղանուն + գետ ե գետ + տեղանուն կառուցվածքներում առկա է գոյականական կապակցության այնպիսի ձև, ուր եզրերից մեկը նախադաս դիրքում չի համաձայնում, իսկ ետադաս դիրքում համաձայնում է կապակցության մյուս եզրին հոլովով (բացառությամբ գործիական հոլովի)։ Գրաբարի որոշ չի այս առանձնահատկությունը դրսևորում է նաև շրանունը։ Այս հանգամանքը հիմք է ծառայել որոշ հայագետների՝ նման կապակցություններում շրանունները դիտել իբրև որոշիչ¹³։ Մենք հակված ենք ընդունել այն հայագետների կարծիքը, ըստ որի տեղանուն + գետ կապակցություններում հանդիպող տեղանունները, եթե շարահյուսական կիրառությամբ հատկացուցիչ չեն, ապա բացահայտիչ են¹⁴։ Ինչպես նշել է Գ. Զահուկյանը, նման «երկեզր գոյականական բառակապակցությունը նշանակում է մենեզր դեռոտառ»¹⁵։ Եփրատ գետ, Երասխ գետ, գետն Դիզաթ, գետն Կուր ե նման կապակցություններում եզրերից յուրաքանչյուրը կարող է ընկալվել թե բացահայտիչ, թե բացահայտյալ¹⁶, նայած թե «հաղորդման մեջ խոսողը որն է առաջին պլանը մղում որպես ելակետ (բացահայտյալ) ե որը դիտում իբրև այդ ելակետի վերաբերյալ արտահայտվող նորություն»¹⁷։ Ըստ այսմ, այս կարգի բառակապակցություններում հանդիպող տեղանունները ինքնուրույն շրանուններ են։

13. Գետ, մօր, ծով, ծովակ բառերով որոշիչ — որոշյալ կապակցությունները, որտեղ իբրև որոշիչ հանդես են գալիս առանձին ածականներ, տեղանվան արժեք ունեն. ինչպես՝ «զափամր մօրին Մեծի բանակի ի տեղւոյ, ուր գետն Մեծ ի ծովակէն Հիւսիսոյ սկիզբն առեալ իշանէ ե խառնի ի մօրն Մեծ» (Խոր. 109), «ե անցեալ (Շամիրամ — Վ. Զ.) ընդ բազումս ի տեղեաց, զայ հասանէ յարեւելից կողմանէ յեզր ծովակին Աղւոյ» (Խոր. 51)։ Կարծում ենք, որ նման կապակցությունները պետք է դիտել որպես բաղադրյալ շրանուններ, մանավանդ որոշ դեպքերում այս

13 Չ. Մ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1972, էջ 100—101։ Հարցի պատմությունը տե՛ս նույն տեղում, էջ 91—96։

14 Մ. Զամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 285, Ա. Բաղդատուհի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 323—326, 489։

15 Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 554։

16 Ըստ էության բուն բացահայտիչը հասարակ անունն է (տերմինը)։ Հմմտ. բույսերի ե կենդանիների երկեզր (նաև եռեզր) անվանումները կենսաբանական դիտական զբաղանդության մեջ։

17 Գ. Բ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 558։

կարդի բաղադրյալ անուններից կազմվել են բարձր շրանուններ, ինչպես՝ Մեծագետ (հմմտ. գետն Մեծ), Մեծամոր (հմմտ. մորն Մեծ):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ագաթ.—«Աղաթանդեղայ Պատմութիւն Հայոց», Բիֆլիս, 1914:
 Ասող.—«Ստեփանոսի Տարոնեցոյ Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885:
 Բուլ.—«Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց ի շորս զպրութիւնս», Վենետիկ, 1832:
 Դրասխ.—«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց», Բիֆլիս, 1912:
 Եղիշէ.—«Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տէր-Մի-նասեանի», Երևան, 1957:
 Հաստ.—«Պատմութիւն Արիստակէայ վարդապետի Հաստիվերտցոյ», Բիֆլիս, 1912:
 Խոր.—«Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յա-րութիւնեան», Տփղիս, 1913:
 Կադ.—«Մովսէս Կադանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի», Երևան, 1983:
 Կոր.—«Կորյուն, Վարք Մաշտոցի, թարգմանությունը առաջարանով և ծանոթագրություններով Մ. Արեղյանի, Երևան, 1941:
 Ղևոնդ.—«Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887:
 Մամիկ.—«Յովհաննու Մամիկոնեի եպիսկոպոսի պատմութիւն Տարոնոյ», Վենետիկ, 1832:
 Սեղ.—«Սեբեդոսի եպիսկոպոսի պատմութիւն, բաղադրութեամբ ձեռագրաց, հանդերձ առա-շարանի: և ծանոթութեամբ Ստ. Մալխասեան», Երևան, 1939:
 Փարպ.—«Ղաղարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան», Տփղիս, 1904:

ДРЕВНИЕ ГИДРОНИМЫ АРМЕНИИ И ОСОБЕННОСТИ ИХ ВЫРАЖЕНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ V—XII вв.

ВРАМШАПУХ ДЖИГАНЯН

Р е з ю м е

Анализ топонимического материала, предоставляемого памятниками древнеармянской литературы, позволил выявить наличие определенных синтаксических конструкций, в которых выступают гидронимы. Наиболее распространенный тип сочетаний—это *топоним+гидротермин*. В зависимости от позиции топонима по отношению к гидротермину выявляются некоторые грамматические особенности, однако препозитивное или постпозитивное употребление топонима придает лишь стилистическую окраску. Гидротермин преимущественно является лишь приложением к гидрониму. В некоторых случаях, однако, *топоним+гидротермин* выступают как единое, неразрывное целое, и их следует рассматривать как составные гидронимы.